2830

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ

№ 324

ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺՆԻ

Ստորին դասարանն ընդունելու համար.

Վաղարշապատ
Էլեկտրական տպարան Մայր Աթոռոյ
1911

14390

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՏԵՂԱԿԱԼԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

14390

6

~~2830~~

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԾԵՄԱՐԱՆ

Դպրոցական բաժնի ստորին դասարանը ընդունւում են ոչ աւելի քան 14 տարեկան (չլրացած) պատանիներ, քննութիւն տալով հետեւեալ ծրագրով:

1. ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. ՀԻՆ ՈՒԽՏ

Նահապետների շրջան (Աբրահամ, Իսահակ, Յակոբ). առաջնորդների շրջան (Մովսէս, Յեսու). դատաւորների շրջան (Գէդէոն, Սամփսոն, Հեղի, Սամուէլ). թագաւորների շրջան (Սաւուղ, Դաւիթ, Սողոմոն). անկման շրջան (Յերոբովամ, Ռոբովամ, Եղիա, Բաբելոնի գերութիւն):

Բ. ՆՈՐ ՈՒԽՏ

1) Քրիստոսի կեանքը՝—Ծնունդ, Տաճարին ընծայումն, Մկրտութիւն, Առաքեալների ընտրութիւն, Քարոզութիւն (Քարոզութիւնը Նազարէթում, Լեռան քարոզը և ինն երանութիւն): Առակները (փարիսեցու և մաքսաւորի, Անառակ որդու, Ողորմած սամարացու, Այրի կնոջ լումայի, Կորուսեալ ոչխարի և դրամի, Սերմնացանի, Որոմի և այդու մշակների): Մուտք Երուսաղէմ, Ոտնալուայ, Խաչելութիւն, Թաղում, Յարութիւն, Համբարձում:

ՊԵՏ ՄԱՏԵՍԱՆՈՒ

2) Յովհաննէս Մկրտչի կեանքը (Ծնունդ, Քարոզութիւն, Մահ)։

Գ. ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

Հոգեգալուստ, Եօթը սարկաւագների ընտրութիւն, Եթովպացի ներքինին, Կուռնելիոսի դարձը, Ստեփաննոսի մահը, Սաւուղի դարձը և Պօղոսը Դամասկոսում. Առաքելական առաջին, երկրորդ և երրորդ ուղևորութիւնները. Պօղոսի դատը, Հռովմ գնալը և մահը։

Ձեռնարկ. Ս. Ք. Սահակեանի կազմած դասագիրքը՝—«Սրբազան պատմութիւն—Հին ուխտ և Նոր ուխտ»։

Դ. ՀԱՒԱՏԱՄՔԸ ԱՄԲՈՂՋ

Ե. ԱՂՕԹՔ։—Տէրունական աղօթքը բացատրութեամբ։Շարական Խորհուրդ մեծ և սքանչելի (3 տ.)։

2. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (աշխարհաբար)

ա. Քերականութիւն I. Ամբողջ ստուգաբանութիւն (Էտիմոլոգիա). Ձայնաւոր և բաղաձայն հնչիւններ. տառեր, երկբարբառներ, վանկեր. կետադրութեան և առոգանութեան նշաններ. ձայնաւոր և բաղաձայն հնչիւնների ուղղագրութիւն և տողադարձի կանոններ։ Բառակազմութիւն. պարզ, բարդ և ածանցական բառեր. արմատ. նախածանց և վերջածանց մասնիկներ։ Ձայնաւորների կորուստն և փոփոխման կանոններ։ Հոմանիշ և նոյնանիշ բառեր։ Բառերի ա-

ռումներ։ Գոյական անուն. յոգնակի և եզակի. յատուկ և հասարակ անուններ. կանոնաւոր և անկանոն հոլովում։ Յօդեր։ Ածական անուն և տեսակները։ Յատկութեան աստիճաններ։ Թուական անուն և տեսակները։ Դերանուն. տեսակները և հոլովում։ Բայ. կանոնաւոր և անկանոն խոնարհումներ. դէմք, ժամանակ, եղանակ և սեռ։ Դերբայներ։ Մակբայ և տեսակներ։ Նախադրութիւն։ Շաղկապ և տեսակները՝ ստորադասական և համադասական։ Ձայնարկութիւն։

Շարահիւսութիւն (Սինտաքսիս)։ Պարզ նախադասութիւն. ենթակայ, ստորոգեալ, խնդիրներ և պարագաներ. կոչական անուն. միջանկեալ բառեր։ Գոյականի լրացումներ՝ յատկացուցիչ, բացայայտիչ։ Հոլովների և նախադրութիւնների կիրառութիւն։ Համաձայնութիւն ենթակայի և բայի, բացայայտչի և բացայայտեալի։ Անենթակայ նախադասութիւններ։Համադասական նախադասութիւններ։ Միջանկեալ նախադասութիւն. ուղղակի խօսքեր և ուղղակի խօսքերի վերածումն անուղղակի խօսքերի։ Բարդ նախադասութիւններ, գլխաւոր և երկրորդական նախադասութիւններ։ Կետադրութեան և առոգանութեան նշանների գործածութիւն։

Ձեռնարկներ՝ Մ. Աբեղեան—«Տարրական քերականութիւն»—երրորդ տպագր.։ Պալասանեան—«Քերականութիւն մայրենի լեզուի»։

բ. Գրաւոր։ Թելադրութիւն, փոխադրութիւն և շարադրութիւն մատչելի նիւթերի մասին՝ աշակերտի անգիր արածից, կարդացածից, լսածից և տեսածից։

գ. Բանաւոր: Ազատ կարդալ առոգանութեամբ և պատմել. հատուածը բաժանել մասերի. կազմել կարդացածի ուրուագիծը. անգիր իմանալ ընտիր հատուածներ՝ արձակ և ոտանաւոր, արևելեան և արևմտեան բարբառներով, առնուազն 6 կտոր:

Ձեռնարկներ՝ Մ. Աբեղեանի — «Ուղղագրական յօդուածներ»: Վանցեանի — «Հայ հեղինակներ»: Ազայեանի, Ահարոնեանի, Յ. Թումանեանի և Փափազեանի — «Հայ գրողներ» I հատոր: Նազարեանի — «Ընտիր հատուածներ»:

3. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

Պարտադիր ռուսահպատակների համար:

ա. Քերականութիւն: Ամբողջ տուղաբանութիւնը (էտիմոլոգիա), բացի բառակազմութիւնից: Հնչիւններ՝ ձայնաւոր, բաղաձայն և կիսաձայն. տառեր, երկբարբառներ, վանկեր. տողադարձի կանոններ. շեշտ. կետադրական նշաններ: Գոյական անուն և տեսակները. յոգնակի և եզակի. կանոնաւոր և անկանոն հոլովումներ: Ածական անուն և տեսակները. հոլովում. համեմատութիւն: Թուական անուն և տեսակները. հոլովում: Դերանուն, տեսակները և հոլովում: Բայ. կանոնաւոր և անկանոն խոնարհումներ. դէմք, ժամանակ, եղանակ և սեռ. բայերի կերպերը (виды). բայածական, դերբայ: Նախադրութիւն: Մակբայ և տեսակները: Շաղկապ և տեսակները: Ձայնարկութիւն: Բառերի ուղղագրութիւն:

Շարահիւսութիւն (սինտաքսիս): Պարզ նախադասութիւն. ենթակայ, ստորոգեալ, խնդիրներ և պարագայական բառեր: Միջանկեալ բառեր. յատկացուցիչ և բացայայտիչ բառեր. հոլովների և նախադրութիւնների կիրառութիւն. համաձայնութիւն նախադասութեան մասերի: Գլխաւոր և երկրորդական նախադասութիւն:

Ձեռնարկներ՝ Преображенскій А.—Элементарная грамматика. Смирновскій П.—Элементарная грамматика.

բ. Գրաւոր. Թելադրութիւն. անգիր սովորածի գրութիւն. գրաւոր պատասխաններ տուած հարցերին. փոխադրութիւն կարճ յօդուածների:

գ. Բանաւոր. Ազատ կարդալ առոգանութեամբ և շեշտաբանութեամբ և պատմել. յօդուածը բաժանել բաղադրիչ մասերի. անգիր գիտենալ ընտիր հատուածներ՝ — արձակ և ոտանաւոր, առնուազն 4 կտոր:

Ձեռնարկներ՝ Корханиди—Образцовые писатели—для млад. и среднихъ клас. Мартыновскій—Русскіе писатели, томъ I.—Максимовъ – Русская грамматика съ большимъ количествомъ письменныхъ упражненій.

4. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ա. Մաթեմատիկական եւ Ֆիզիկական մաս:

Հորիզոն և աշխարհի կողմերը. երկրի ձևը. երկրի շարժումը: Գլոբուս, բևեռներ, առանցք, միջօրէական, հասարակած և զուգահեռական

շրջագծեր. աշխարհագրական լայնութիւն և երկարութիւն. գօտիներ։ Ցամաքը և ջուրը։ Ցամաքի բաժանումը։ Ցամաքի մակերևոյթը։ Լեռներ, լեռնադաշտեր և հրաբուխներ. հովիտներ և ձորեր. հարթութիւններ, կղզիներ, թերակղզիներ, հրուանդան, պարանոց։ Ովկիանոսներ, ծովեր, ծոցեր, ջրանցքներ, գետեր, լճեր, սառցարան. հոսանքներ, տեղատուութիւն և մակընթացութիւն. ջրաբաժիններ։ Օդ և մթնոլորդային երևոյթներ։ Կլիմայական երևոյթներ։ Բոյսեր և կենդանիներ. մարդ և մարդկային ցեղեր։

Բ. Ասիա, Աֆրիկա, Ամերիկա եւ Աւստրալիա։ Ֆիզիկական, քաղաքական, ազգագրական և քաղաքակրթական տեսութիւն։ Աշխարհամասերի դիրք, սահման և տարածութիւն, մակերևոյթ, ջրաբաշխութիւն, կլիմայ, բուսականութիւն, կենդանիներ և հանքեր, ազգաբնակութեան քանակութիւնը, խառութիւնը, ծագումը, կրօնը և քաղաքակրթական աստիճանը, գլխաւոր պարապմունքները և արդիւնաբերութիւնը։ Նշանաւոր տերութիւններ. Ֆիզիկական դրութիւնը (նշանաւոր լեռներ, դաշտեր, գետեր, լճեր. կլիման. բուսականութիւն, կենդանիներ և այլն). քաղաքական և վարչական կազմը և սահմանները. ազգաբնակութեան կազմը, քաղաքակրթական աստիճանը և գլխաւոր պարապմունքը ու արդիւնաբերութիւնը։

Ձեռնարկներ՝ «Ընդհանուր աշխարհագրութիւն»—փոխ. Ա. Աբեղեանի, 1 և 2 մաս։ Լ. Բաբայեան—«Աշխարհագրութիւն», 1-ին և 2-րդ մաս։

5. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թուանիշերի տեսակները (հայկական, արաբական և հռովմէական)։ Չորս գործողութիւն։ Գործողութիւնների ստուգումը։ Փակագծերի գործածութիւնը։ Անուանական թուեր. ժամանակի, ծանրութեան, երկարութեան, հեղուկների, հացահատիկների չափեր. դրամներ. մակերևոյթի և ծաւալի չափեր. մետրիկ չափեր։ Վերածում և անդրադարձում։ Չորս գործողութիւն անուանական թուերով։

Թուերի բաժանելիութիւնը.

Պարզ և բարդ թուեր. բաժանելիութեան նշանացոյցերը։ Թուերի վերլուծումը պարզ բազմապատկիչների. ամենամեծ ընդհանուր բաժանարար. ամենափոքր բազմապատիկ։

Հասարակ կոտորակներ.

Կոտորակի մեծանալու և փոքրանալու պայմանները. կրճատում. ընդհանուր յայտարարի բերելը. չորս գործողութիւն։

Տասնորդական կոտորակներ.

Չորս գործողութիւն։ Վերածում հասարակ կոտորակների և ընդհակառակը. Պարբերութիւն և նրա վերածումը հասարակ կոտորակի։

Ձեռնարկներ՝ Վարձելեան—«Թուաբանութեան կանոններ»։ Զոհրաբեան—«Խնդրագիրք» I և II մ.։ Պանճուլազեան—«Խնդրագիրք»։ Киселевъ—Руководство по ариѳметикѣ.

6. ԲՆԱԳԱՏՄՈՒԹԻՒՆ

Պինդ. հեղուկ և գազային մարմիններ. մարմնի կշիռը. տեսակարար կշիռը և խտութիւնը. Ջերմութեան ազդեցութիւնը մարմինների վրայ. Ջերմաչափը և նրա գործածութիւնը։

Օդը. Նրա գոյութեան ապացոյցները. օդի ճնշումը. օդի բաղադրիչ մասերը. բորակածին, թթուածին, ածխաթթուա, գոլորշի և փոշի։ Ժանգ. այրուելը և շնչառութիւն. թթուածին։

Ջուրը և նրա երեք տեսակի դրութիւնը. Ջուրը բնութեան մէջ և նրա կատարած դերը. Ջրի զտումը և քաշելը. զուտ ջուր. Ջրի բաղադրիչ մասերը. հանքային և տաք ջրեր։ Ջրածին։

Պարզ եւ բարդ մարմիններ. մետալ և մետալակերպ. հող, քարեր և հանքեր. աղ, կիր, կաւ, աւազ և աւազաքար. թերթաքար, գրանիտ, տրակիտ, քարածուխ, նաւթ, սահող, գետին, պղինձ, երկաթ, արճիճ, ոսկի, արծաթ, կլայեկ, ծծումբ։

Երկրագնդի կեղևի կրած փոփոխութիւնները։ Օդի, ջրի, կենդանիների, բոյսերի, երկրաշարժի, հրաբուխի, լեռնակազմական ոյժերի ներգործութիւնը կեղևի վրայ։ Երկրագնդի և իր կեղևի անցեալը։

Ձեռնարկներ. Գիւզալեան—«Դասագիրք բնական պատմութեան»։ Вагнеръ—Природовѣдѣніе ч. 1. Шмейль. Начальное міровѣдѣніе. ч. I.

Ծանօթութիւն. Նկարագրած ձեռնարկները կարելի է փոխարինել այլ գրքերով՝ համապատասխան ծրագրի ծաւալին։

ՄՄ

ԱԶԴ

Քննութիւնները սկսուելու են Օգոստոսի 25-ից։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014912